Հայաստանի Հանրապետություն
Հայտերի ներկայացման հրավեր
Ազգային մրցութային սակարկություն
«Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր
փոխառություն. թիվ – 1673 P

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար և Վարդենիկ համայնքների և ՀՀ Շիրակի մարզի Հոռոմ համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցերի լրացուցիչ վերակառուցում»
IRFSP /CW/NCB-2019/016

1. Հայաստանի Հանրապետությունը Միջազգային զարգացման ՕՊԵԿ Հիմնադրամից (ՄԶՕՀ) ստացել է փոխառություն «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր ծախսերը հոգալու համար և նախատեսում է փոխառության գումարների մի մասը օգտագործել **«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար և Վարդենիկ համայնքների և ՀՀ Շիրակի մարզի Հոռոմ համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցերի լրացուցիչ վերակառուցում» IRFSP /CW/NCB-2019/016** պայմանագրով նախատեսվող աշխատանքների դիմաց վճարումներ կատարելու համար:

2. ՀՀ ԳՆ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն հրավիրում է իրավասու և որակավորման չափանիշներին համապատասխանող կազմակերպություններին ներկայացնելու հայտեր վերոնշյալ պայմանագրով նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման համար: Աշխատանքների իրականացման ժամկետն է՝ **12 ամիս**:

3. Մրցույթը կիրականացվի Միջազգային զարգացման ՕՊԵԿ Հիմնադրամի Գնումների Ուղեցույցների համաձայն՝ Ազգային մրցութային սակարկության եղանակով: Մրցույթը բաց է Մրցութային փաստաթղթերով սահմանված իրավասու երկրների ծագում ունեցող բոլոր հայտատուների համար:

4. Շահագրգիռ և իրավասու հայտատուները կարող են ստանալ լրացուցիչ տեղեկություններ և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ստորև նշված հասցեում բոլոր աշխատանքային օրերին, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 09:00-ից մինչև 18:00:

5. Որակավորման չափանիշները ներառում են.

   ա) Վերջին հինգ տարիների ընթացքում կատարած շինարարական աշխատանքների միջին տարեկան ծավալը պետք է կազմի՝ **465,000,000.0 ՀՀ դրամ:**
   բ) որպես գլխավոր կապալառու պետք է ունենա փորձառություն առնվազն 2 շինարարական աշխատանքների ոռոգման ոլորտում /յուրաքանչյուրը առնվազն 230.0 մլն ՀՀ դրամ արժեքի/ նմանատիպ բնույթի և բարդության վերջին հինգ տարիների ընթացքում: Մասնավորապես՝ ЛР 40 / ЛР 60 երկաթբետոնյա վաքերի տեղադրման փորձ առնվազն 5500 մետր և պոլիթէիլենային խողովակաշարերի Φ 63-250մմ առնվազն 3500 մ վերջին հինգ տարիների ընթացքում:
   գ) շրջանառու ընթացիկ միջոցներ և/կամ վարկային գծերի հնարավորություններ, այլ պայմանագրային պարտավորություններով չծանրաբեռնված՝ **58,200,000.0 ՀՀ դրամ:**

6. Հետաքրքրություն ունեցող հայտատուների կողմից մրցութային փաթեթը կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեում մինչև 2019թ. նոյեմբերի 22-ի, ժ. 18:00, գրավոր դիմում ներկայացնելու և 10,000.0 ՀՀ դրամի չափով, չփոխհատուցվող գումար վճարելու պարագայում: Նշված գումարի վճարման եղանակն է ստորև նշված բանկային հաշվին վճարումը:

7. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով մինչև 2019թ. նոյեմբերի 22-ի ժամը 15:00: Էլեկտրոնային եղանակով հայտերի ներկայացում չի թույլատրվում: Ուշացված հայտերը կմերժվեն և կվերադարձվեն Հայտատուներին չբացված վիճակում: Հայտերը կբացվեն անմիջապես, 2019թ. նոյեմբերի

22-ին, ժամը 15:00-ին մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայությամբ՝ ստորև նշված հասցեում:

8. Հայտերը պետք է ուղեկցվեն Հայտի երաշխիքով, որի գումարը պետք է կազմի՝ **4,600,000.0 ՀՀ դրամ:**

9. Վերևում հիշատակվող հասցեն է.

Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ
ՀՀ, ք. Երևան, 0010, Տիգրան Մեծի 4, 6-րդ հարկ, տնօրեն՝ Աշոտ Վարդանյան
հեռ. 37410 54 65 10 138; էլ.փոստ: procurement@raed.am
Ամերիա Բանկ ՓԲԸ, h/h 15700 – 11483010200